ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՐԴԱՏ ՄԵԾԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ*

Արշակ Ներսիսյան

Բանալի բառեր՝ Մեծ Հայք, Տրդատ Մեծ, Գրիգոր Լուսավորիչ,Կոստանդիանոս, Շապուհ 2–րդ, Արիստակես,Սասանյան Պարսկաստան, Հռոմ, քրիստոնեություն, եկեղեցի, հեթանոսություն, Հռոմ, հավատ, հռոմեասեր, պարսկասեր:

Հայաստանում որպես պետական կրոն ընդունելուց հետո Քրիստոնեությունն անմիջապես չէր կարող վերածվել ազգային կրոնի: Կարծում ենք՝ դա կարելի է պայմանավորվել հետևյալ երկու պատճառներով՝ ա/ հնարավոր չէր մի հրովարտակով և զինու ուժով ընդունելի դարձնել մի կրոնական գաղափարախոսություն, որը դրսից էր ներմուծված և ամենևին չէր համընկնում հայոց հազարամյա հավտալիքների հետ, բ/ Մեծ Հայքի թագավորությունում, որը գտնվում էր երկու ուժեղ պետությունների՝ Հռոմի և Պարսկաստանի հակասությունների ոլորտում, մասնավորապես երկրորդի ազդեցությամբ ներքաղաքական կյանքի պառակտման հիմքով հակաքրիստոնեական քարոզչություն էր իրականացվում: Այդ քարոզչության ակտիվացումը հաճախ տեղի էր ունենում քաղաքական խոստումներով պայմանավորված, որոնց հրապուրանքից զերծ չէին կարող մնալ հայ շատ հայտնի նախարարներ: Անշուշտ, Պարսկաստանը, հանձին Շապուհ 2–րդ արքայի, խաղում էր ավելի նուրբ լարի վրա, քանի որ, իրոք, հայոց մեջ արմատացած էին հեթանոսական աստվածները կամ հայ ցեղի աստվածները, որոնցից շատերի պաշտամունքը (Միհրի, Անահիտի և այլն), կար նաև Պարսկաստանում: Ստեղծված իրավիճակում ավելի հեշտ էր քաղաքական խնդիրներ լուծել՝ նախնյաց կրոնի պահպանման խրախուսմամբ, քան նոր, թերևս ժողովրդական լայն զանգվածներին ոչ հաստ, քրիստոնեական գաղափարախոսության սերմանմամբ: Խոսրով Կոդակից հետո Տիրանը, Արշակը և Պապը որդեգրին այնպիսի կրոնական քաղաքականություն, որը չէր մերժում հինը, ավելին՝ նույնիսկ խրախուսում էր՝ առանց քրիստոնեական գաղափարախոսության դեմ հստակ պայքար որդեգրելով: Նրանք ավելի շատ հետամուտ էին մի խնդրի՝ եկեղեցու կամ կաթողիկոսի՝ օրեցօր աճող իշխանության դեմն առնելու և կաթողիկոսին իրենց ենթարկելու, որում չի կարելի ասել, որ լիովին հաջողության հասան: Նրանց պայքարը ժամանակավոր բնույթ էր կրում, քանի որ կենտրոնախույս ձգտումների դեմ պայքարը, ավատատիրական հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված, ուժեղացած նախարարներին հաճախ տանում էր դեպի կաթողիկոսի հետ դաշինքը, քանզի հողային սեփականության նկատմամբ անձեռնմխելիության ցանկությանը ստորադասվում էր պետության ամրապնդման և ներքին կայունության ցանկությունը: Ահա սա էր, որ արքաներին դարձնում էր պարտվող կողմ: Նրանք պարտվող կողմ էին մնում կենտրոնածիգ պետության ամրապանդման պայքարում՝ ներքին ուժերի, Հռոմի և Պարսկաստանի մշտական դավադրությունների առկայության պայմաններում: Երբեմն Պարսկաստանի համար եկեղեցին էլ դարձել է հենակետ այդ պայքարում, քանի որ վերջինս ընդդեմ արքաների էր գործում: Այս առումով միանգամայն ճիշտ կարելի է համարել հետևյալ դիտարկումը. «Եկեղեցին 4-րդ դարի ընթացքում տնտեսապես այնքան էր հզորացել և իրեն ենթարկել որոշ կենտրոնախույս նախարարական տներին, որ դարձել էին իրենց տրամադրված տարածքների փաստացի տերերը և աշխատում էին պետությանը չվճարել իրենց ենթակա գյուղա-

---

* Հոդվածն ընդունվել է 30.04.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը: 03.05.21:

կան համայնքներից գանձվող հարկերը: Չնայած նախարարական առանձին տների նկատմամբ գործադրած խստագույն միջոցառումներին՝ Արշակունիների կենտրոնական իշխանությունն ի զորու չեղավ դիմակայելու եկեղեցական կղերի դավադրությունները, սաստելու եկեղեցուն ու նրա հովանավորած կենտրոնախույս իշխաններին և դեպի անկում էր գնում: Հենց այս հանգամանքն էլ օգտագործեցին Հայաստանի տարածքի համար իրար դեմ պայքարող Սասանյան Իրանն ու Հռոմեական կայսրությունը» [1]:

Այս երևույթն ավելի արմատացավ 4-րդ դարի վերջերին, մասնավորապես՝ Հայաստանի առաջին բաժանումից հետո (387թ.), բայց մի բան ակնհայտ է, որ, իրոք, եկեղեցին հակապետական ձգտումներով նպաստի իր բաժինն ունեցավ Մեծ Հայքի թագավորության անկման գործում: Սա մի հարց է, որի՝ նոր հայեցակետերով մատուցելը կարևոր դեր կարող է ունենալ հայոց երբեմնի հզոր պետականության՝ Մեծ Հայքի թագավորության թուլացման, բաժանման և անկման գործում:

Բայց մեր խնդիրն այսօր այլ է՝ ցույց տալ, թե ինչպիսի տեղ ուներ Մեծ Հայքի թագավորության մեջ հայոց եկեղեցին մինչև Հուսիկ կաթողիկոսի գահակալումը՝ Տիրանի օրոք, քանի որ այդ հիմնախնդիրը դեռևս պատմագիտական հայեցակարգերի տեսքով ընդունելի եզրակացությունների չի հանգեցրել:

Հենց սկզբից հարկ ենք համարում շեշտել, որ չնայած պատմիչների վկայություններին՝ Տրդատի օրոք քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունումը դրան հաջորդող ժամանակահատվածում հարթ ու խաղաղ չի ընթացել: 313 թ. Կոստանդիանոս կայսեր կողմից Միլանի հրովարտակի հրապարակումից հետո, որով քրիստոնեությունը դադարում էր հալածված կրոն լինելուց, և նրա ազատ քարոզչությունը չէր արգելվում, որը նշանակում էր, որ այն Հռոմի համար էլ դառնում էր պետական կրոն, ամենևին չի նշանակում, թե այն այնտեղ էլ միանգամից արմատացավ: Տեղի ունեցավ այն, ինչն արդեն եղել էր Հայաստանում: Հիշարժան է Լեոյի հետևյալ դատողությունը. «Դրանից հետո ինքը՝ Կոստանդինն էլ ընդունեց քրիստոնեությունը, որ և դարձավ պետական կրոն և կայսերական զորքերի վրա հենված՝ սկսեց տարածել նորանոր աշխարհներում» [2]:

Բնականաբար, այս պայմաններում Հայաստանը պետք է քաղաքականապես կողմնորոշվեր դեպի Հռոմը, որի կայսրը, չնայած իր զինու ուժով քարոզչությանը, ներքաղաքական ամուր դիրքեր չուներ: Այս առումով նրան այնքան էլ չօգնեց Բոսֆորի ափին 328թ. նոր մայրաքաղաքի կառուցումը, որն իր անունով կոչեց Կոստանդնոպոլիս: Տրամաբանություն կա Լեոյի այն դիտարկման մեջ, ըստ որի «Կ. Պոլիսը միայն հռոմեական մայրաքաղաքը չէր, այլև համայն աշխարհի: Նա արդեն զուտ քրիստոնեական միջավայր էր և Հռոմից զանազանվում էր նաև նրանով, որ հունական կերպարանք ստացավ ու այդ կերպարանքն էլ հաղորդեց պետության: Այնուհետև Արևելքի մշտնջենական ընդհարումների մեջ Հռոմի տեղ Բյուզանդիան էր կանգնած Պարսկաստանի դեմ» [3]:

Անշուշտ, տվյալ ժամանակահատվածում դեռևս նոր էր սկսվում տեսական պայքարը քրիստոնեության ընդունման նպատակահարմարության համար, և նոր պետք է մշակվեին տեսական հիմքերը նրա ամրապնդման համար և հիմնականում տիեզերաժողովներում: Իսկ այս օրերին դեռևս Սասանյան Պարսկաստանը կարողանում էր խառնել քաղաքական խաղաքարտերը և հաճախ՝ հօգուտ իրեն: Նրա համար մտահոգիչը հայոց քրիստոնյա դառնալը չէր այնքան, որքան այդ երևույթին դիմակայելով՝ նրանց իր կառքին լծելը, որում, համենայն դեպս, հաջողեց: Ուրեմն, իրոք, Տրդատ Մեծի և Կոստանդիանոս Մեծի դաշինքը «պաշտպանողական դաշնակցություն» անվանելով՝ չի սխալվում Լեոն [4]:

Կոստանդիանոսը ոչնչով չէր կարող պաշտպանել աշխարհի առաջին քրիստոնեական երկրի արքային, որովհետև դա թե՛ տեսական և թե՛ քաղաքական առումներով անհնար էր: Հայության մեջ արմատացած էին մնում հին աստվածները: Նոր քրիս-

տոնական գաղափարախոսության ներմուծումը ընդհանրական չէր կարող դառնալ մի քանի տարիների ընթացքում: Մանավանդ, 325թ. տեղի ունեցած Նիկիայի տիեզերաժողովից հետո, որին մասնակցել է Գրիգոր Լուսավորիչի որդի Արիստակեսը և որից շատ չանցած մահացել է Գրիգորը, փաստորեն անօգնական վիճակում է հայտնվում Տրդատը: Մի կողմից Հռոմում քրիստոնեության դեռևս լիարժեքորեն ամրապնդված չլինելու հանգամանքը, մյուս կողմից էլ Շապուհի՝ Մեծ Հայքն իրեն ենթարկեցնելու ձգտումը, հանգեցնում է Տրդատի մեկուսացմանը և հնարավոր է՝ նաև դավադրաբար սպանությանը: Համենայն դեպս, Խորենացին մի տեղեկությամբ վկայում է, որ Տրդատը բնական մահով չի մահացել: Նրա պատմության երկրորդ գրքի վերջին տողերը հետևյալն են. «Բայց սուրբ Տրդատի մասին մեր պատմածը ճշմարիտ է. նրան մահվան դեղ խմցնելով՝ զրկվեցին նրա շնորհի ճառագայթների լույսից: Նա թագավորեց հիսուն և վեց տարի» [5]: Պատմահոր այս տեղեկությանը ուսումնասիրողները վերապահությամբ են մոտեցել, բայց մի բան ակնհայտ է, որ նա հենց այնպես երբեք ոչ մի տող չի գրել: Հ. Մանանդյանը նույնպես մի փոքր անդրադարձ է կատարել Տրդատի՝ դավադրության զոհ եղած լինելու հանգամանքին՝ հղելով մեկ այլ սկզբնաղբյուր, բայց դա հավաստի պատմական տեղեկություն չի համարում՝ հենվելով Գ. Խալաթյանցի հիմնավորումների վրա [6]: Անկախ ամեն ինչից, Խորենացու վերոհիշյալ տողը մեկ այլ իրողության ապացույցն է՝ այդ ժամանակ հայության մեջ հակաքրիստոնեական տրամադրություններն ուժեղացել էին: Այսպես, դրանից ոչ շատ առաջ նա հետևյալն է գրում. «Սա (Տրդատը – Ա. Ն.) Քրիստոսին հավատալուց հետո ամեն տեսակ առաքինություններով փայլելով՝ ավելի և ավելի ջանքեր էր անում խոսքով ու գործով Քրիստոսի (հավատի) համար. սաստելով և համոզելով մեծամեծ նախարարներին, այլև ռամիկ մարդկանց բազմությունը, իրապես Քրիստոսի (հավատացյալ) լինելու, որպեսզի նրանց գործերը համապատասխանեն նրանց հավատին: Բայց այստեղ ես շեշտելու եմ մեր ազգի ստասրտությունը, այլև ամբարտավանությունը սկզբից մինչև այժմ, որ նրանք անտարբեր լինելով դեպի բարին, խորթ լինելով ճշմարտության, կամ թե բնությամբ մեծամիտ ու կամակոր լինելով, դիմադրում են թագավորի կամքին քրիստոնեական կրոնի վերաբերմամբ, հետևելով իրենց կանանց ու հարճերի կամքին» [7]:

*Հետևությունը մեկն է՝ թե՛ աշխատավոր մարդիկ և թե՛ խոշոր նախարարները չէին համակերպվում նոր հավատին: Եվ սա դժվար է միայն պայմանավորել պարսից արքայի դրդումներով: Կար դարավոր հավատից հեռանալու պարտադրված խնդիր, որի լուծումը դյուրին չէր: Նույնով պետք է պայմանավորել նաև Գրիգոր Լուսավորչի հեռանալը եպիսկոպոսապետի աթոռից Մանեի կամ Մանյա այրը (ըստ Խորենացու), ուր տարիներ ճգնելուց հետո մահանում է և նրան վախճանված գտնելով՝ թաղում են հովիվները: Այնուհետև Խորենացին հետևյալ հետաքրքիր տողերն է գրում՝ «Եվ այսպես (մարմինը) երկար տարիներ ծածուկ մնաց, **կարծես ինչ – որ աստվածային տնօրինությամբ, ինչպես հնումը Մովսեսինը, որպեսզի նորադարձ բարբարոս ազգերից չպաշտվի: Իսկ երբ մեր կողմերում հավատն արմատացավ ու հաստատվեց,** շատ ժամանակ անցնելուց հետո հայտնվեց Գառնիկ անունով մի ճգնավոր, և ապա սուրբ Գրիգորի նշխարները բերվեցին և թաղվեցին Թորդան գյուղում» [8]: (Ընդգծումը մերն է- Ա. Ն.):*

Կարելի է ենթադրել, որ նա կյանքի վերջին տարիներին եղել է հալածական և չի ընդունվել հայության մեծամասնության կողմից, ինչպես Տրդատը, հակառակ դեպքում ինչ են նշանակում Խորենացու վերոնշյալ վկայությունները: Եթե ծածուկ է պահվել, ուրեմն հալածողներ են եղել, քանի որ հավատն արմատացած չէր:

Գրիգորը վախճանվել է Տրդատից առաջ, ոչ շուտ, քան Նիկիայի տիեզերաժողովը: Բայց այստեղ էականը դա չէ, այլ այն, որ Տրդատը և Գրիգորը, չնայած հրավերին, չեն գնում տիեզերաժողովին մասնակցելու, այլ ուղարկում են Գրիգորի որդի Արիստակեսին: Կարելի է ենթադրել, որ նրանք չեն գնացել՝ այն մտավախությունից ելնելով, որ կարող է ընդվզել հակահռոմեական, որ նույնն է՝ պարսկամետ թևը, որը նաև, ըստ

էության, քրիստոնյա հավատի ջերմեռանդ հետևորդը չէր: Այս ենթադրությանը հիմք են տալիս պատմահոր հետևյալ տողերը. «Այս ժամանակ ինքնակալ Կոստանդիանոսից հրովարտակ է հասնում մեր Տրդատ թագավորին, որ սուրբ Գրիգորին հետն առնելով գնա ժողովին: Բայց Տրդատն հանձն չառավ, որովհետև լսել էր, թե Շապուհը խնամիացել է հնդկաց թագավորին...ուստի կասկածի մեջ էր, միգուցե (Շապուհը) պայմանին ստե, հեթանոսների սովորությամբ, այս պատճառով էլ մեր աշխարհն առանց իր ներկայության չթողեց... Բայց սուրբ Գրիգորն էլ չհամաձայնեց գնալու...»[9]: Խորենացու պատճառաբանությունները վերջինիս չգնալու մասին համոզիչ չեն, որի համար չենք մեջբերում: Ըստ դրանց՝ չի գնում, որովհետև չէր ուզում ժողովից մեծ պատիվներ կրել: Բայց, կարծում ենք, որ գլխավոր պատճառը նույնն էր՝ նա և Տրդատն անհանգստանալու շատ բան ունեին: Ուստի ուղարկում են Արիստակեսին: Վերջինս Գրիգորի կրտսեր որդին էր և, Փավստոսի վկայությամբ, «իր հոր գործակից և եպիսկոպոսակից էր նրա վարդապետության ամբողջ ընթացքում» [10]: Նա մեկնում է Նիկիա և վերադառնում, բայց նրա ողջ գործունեությունը որպես հոր աթոռակից (այդ շրջանում կաթողիկոս տերմինը չկար, այլ եպիսկոպոսապետ, ով, սկսած Գրիգորից, օծվում էր Կեսարիայում) քրիստոնեության արմատացման առումով սակավաբեր է լինում: Խորենացին վկայում է, որ Արիստակեսի վերադառնալուց հետո Գրիգորն այլևս ժողովրդին չի երևում և փաստորեն քահանայապետ է դառնում Արիստակեսը: Բայց, ամենայն հավանականությամբ, Խոսրով Կոդակի կառավարման առաջին տարում նա սպանվում է: Այդ մասին պատմահայրը գրում է. «Որովհետև նա (Արիստակեսը – Ա. Ն.) հոգևոր սուր էր, ինչպես ասված է, ուստի նա թշնամի էր թվում բոլոր անիրավ և աղտեղագործ մարդկանց: Ուստի Արքեղայոսը, որը Չորրորդ Հայքի վերակացու էր նշանակված, նրանից հանդիմանվելով, հարմար օրվան էր սպասում և Ծուփաց գավառում նրան ճանապարհին պատահելով, սրով սպանեց, իսկ ինքը փախավ գնաց Կիլիկիայի Տավրոս(լեռը)»: Նրա մարմինը աշակերտները տարան և թաղեցին Եկեղյաց գավառի Թիլ ավանում[11]: Ըստ Լեոյի՝ այս սպանությունը պարսկասերների գործն էր: Հռոմեասերները եպիսկոպոսապետ են կարգում նրա ավագ եղբայր Վրթանեսին, որի հոգևոր առաջնորդ լինելու շրջանն էլ առանց ներքին լուրջ տարաձայնությունների չի անցել:

Ընդհանրացնելով նշենք, որ այսպիսով՝

Առաջին. Տրդատ Մեծի կառավարման վերջին շրջանում Մեծ Հայքի թագավորությունում հեթանոսական հավատից արագ հրաժարվելու և արտաքին ուժերի ճնշման արդյունքում քրիստոնեական կրոնը հայոց մեջ ապրում է հոգևոր տեղատվության շրջան:

Երկրորդ. դրա արդյունքում փաստորեն եպիսկոպոսապետի աթոռը թողնում է Գրիգոր Լուսավորիչը, իսկ Տրդատ Մեծը չի կարողանում հաստատուն պահել իր գահը, քանի որ Հռոմից չի ստանում հարկ եղած աջակցությունը այն հիմնավոր պատճառով, որ այնտեղ էլ Միլանի հրովարտակից հետո կար նույն խնդիրը:

Երրորդ. քրիստոնեական հավատի առաջնորդները հալածվում էին հեթանոսական հավատի ջերմեռանդ կողմնակիցների և պարսկասերների կողմից:

Ստեղծված իրավիճակում Մեծ Հայքի թագավորությունը գնում էր դեպի թուլացում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներսիսյան Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2011, էջ 279:
2. Լեո, Երկերի ժողովածու, Առաջին հատոր, Երևան, 1966, էջ 427:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981,էջ 242:
6. Մանանդյան Հ., Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 139 – 140:
7. Նույն տեղում, էջ 240:
8. Նույն տեղում, էջ 239:
9. Նույն տեղում, էջ 236:
10. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 67:
11. Մովսես Խորենացի,նշվ. աշխ., էջ 239, նաև Փավստոս, նշվ աշխ. էջ 6:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Վերաբերմունքը քրիստոնեական հավատի նկատմամբ Տրդատ Մեծի թագավորության վերջին շրջանում

Արշակ Ներսիսյան

Տրդատ Մեծի կառավարման վերջին շրջանում թեև Քրիստոնեությունը պետականորեն ընդունված կրոն էր, բայց դեռևս հայոց մեջ չէր հասել ընդհանրության: Սասանյան Պարսկաստանը, օգտվելով այդ հանգամանքից, հայ ընդդիմադիր նախարարներին տրամադրում էր հայոց թագավորի դեմ: 313թ. Կոստանդիանոսի էդիկտից հետո գրեթե նույնը կատարվում էր Հռոմում: Տրդատը փաստորեն չունեցավ աջակցություն ոչ ժողովրդի մեծամասնության կողմից և ոչ էլ Հռոմի: Գրիգոր Լուսավորիչը և իր որդի Արիստակեսը նույնպես չկարողացան լիովին հաջողության հասնել հավատի արմատականացման առումով: Մի բան ակնհայտ է, որ հավատի խնդիրները քաղաքականացվում էին՝ իշխանության հասնելու համար, որից օգտվում էր Պարսկաստանը՝ իրեն ենթարկեցնելու ոչ լիովին քրիստոնյա դարձած Մեծ Հայքի թագավորությանը:

РЕЗЮМЕ

Отношение к христианской вере в последний период правления Трдата Великого

Аршак Нерсисян

Ключевые слова: Великая Армения, Трдат Великий, Григорий Просветитель, Константинополь, Шапух II, Аристакес, Сасанидская Персия, Рим, христианство, церковь, язычество, Сасанидская Персия, Рим, вера, римляне, персии.

В конце правления Трдата Великого христианство было признанной государством религией, но еще не стало распространенным среди армян. Сасанидская Персия использовала это обстоятельство, чтобы настроить министров армянской оппозиции против армянского царя. Фактически, в 313 году, после Константиновского эдикта, в Риме произошло то же самое. У Трдата практически не было поддержки ни со стороны большинства народа, ни со стороны Рима. Григорию Просветителю и его сыну Аристакесу также не удалось полностью радикализировать веру. Ясно одно, проблемы веры были политизированы с целью завоевания власти, которую использовала Персия для подчинения царства Великой Армении, ставшего не полностью христианским.

SUMMARY

Attitudes towards the Christian Faith in the Last Period of the Reign of Trdat the Great

Arshak Nersisyan

Keywords: Great Armenia, Trdat the Great, Gregory the Illuminator, Constantinople, Shapukh II, Aristakes, Sasanian Persia, Rome, Christianity, Church, paganism, Sasanian Persia, Rome, Faith, Romans, Persians.

At the end of the reign of Trdat the Great, Christianity was a state-recognized religion, but it had not yet become common among Armenians. Sasanian Persia used this circumstance to turn the Armenian opposition ministers against the Armenian king. In 313, after the Edict of Constantine, in fact, the same thing happened in Rome. Trdat had virtually no support from either the majority of the people or Rome. Gregory the Illuminator and his son Aristakes also failed to fully succeed in radicalizing of the faith. One thing is clear, the problems of the faith were politicized in order to gain power, which was used by Persia to subjugate the kingdom of Greater Armenia, which had become incompletely Christian.